Սպարտակ Խաչատրյանի և Լաուրա Գասպարյանի սնանկության գործով գույքը հրապարակային կրկնակի սակարկություններով վաճառելու մասին

2026-10-26 09:19:36

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

Սպարտակ Խաչատրյանի և Լաուրա Գասպարյանի սնանկության գործով 23.10.2026թ-ին նշանակված գույքի աճուրդային վաճառքը չի կայացել՝ հայտերի բացակայության պատճառով:
12.11.2026թ ժամը 15:00-ին սնանկության գործով կառավարիչ Հենրիկ Մարտիկյանի կողմից ք.երևան, Արշակունյաց պողոտա 5 հասցեում կանցկացվի Սպարտակ Խաչատրյանի և Լաուրա Գասպարյանի թիվ ՍնԴ/1329/04/23 սնանկության գործով պարտապան Սպարտակ Խաչատրյանին պատկանող անշարժ գույքերի բաց դասական եղանակով աճուրդ-վաճառքը՝ նախկինի համեմատ 10% իջեցված գներով՝ երկու լոտով..
ԼՈՏ 1. աճուրդի է դրվում Արարատի մարզ, համայնք Վեդի ք. Մ. Խաչատրյան փողոց 50 հասցեում գտնվող ՝ 03-004-0073-0116 կադաստրային ծածկագրով 0.20654 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, որի վրա կառուցված է 472,26քմ մակերեսով շինություն: Բացի նշվածից, հողամասում առկա են 215.87 քմ ինքնակամ կառուցված շինություն, ինքնակամ բացված 6 հատ դուռ և 4 հատ պատուհան:
Անշարժ գույքի ընդհանուր տեխնիկական վիճակը գնահատվել է միջին, արտաքին պատերի շարը կատարված է քարով, արտաքին հարդարում չունի, տանիքը՝ թիթեղյա: Հողամասում կառուցված են մեկ և երկու հարկանի շինություններ, որի մի հատվածի ներքին հարդարումը բարվոք վիճակում է, իսկ մյուս հատվածը՝ առանց ներքին հարդարման է: Առկա են նաև վկայականում չգրանցված ինքնակամ կառուցված հատվածներ և պատերի ձևավորումներ, որոնց մասով հաշվարկներ չեն կատարվել առաջադրանքի համաձայն: Անշարժ գույքի սեփականատերն է Սպարտակ Սողոմոնի Խաչատրյանը /սեփ. իրավունքի վկայական N 14022019-03-0033, գրանցված 14.02.2019թ-ին, գաղտնաբառ՝ S2DCFFKTDLVN/: Հաշվի առնելով անշարժ գույքի շուկայական արժեքը հաշվարկված վկայականում գրանցված, փաստացի առկա ինքնակամ կառուցված շինություններով հանդերձ, գույքի գինը առ 26.09.2025թ-ը գնահատվել է 94.480.000

ՀՀ դրամ, սակայն հաշվի առնելով ինքնակամ շինությունների օրինականացված չլինելու կարգավիճակը՝ գույքը վաճառքի է ներկայացվում առանց ինքնակամ շինությունների արժեքի հաշվառման, ըստ որի լոտի մեկնարկային գինը հերթական աճուրդում կազմում է 30.304.900 (երեսուն միլիոն երեք հարյուր չորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:
(Ծանոթություն. հողամասի նկատմամբ սեփ. իրավունքը փոխանցված է ՀՀ 04.10.2005թ N199-Ն օրենքի 23-րդ հոդվածի պահանջի համաձայն, պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացնելու դեպքում):
ԼՈՏ 2. Արարատի մարզ, համայնք Վեդի ք. Մ. Խաչատրյան փողոց 50/3 հողամաս հասցեի 03-004-0073-0091 կադաստրային ծածկագրով 0,00384 հա մակերեսով հողամաս, որի վրա կառուցված է 31.36քմ մակերեսով հասարակական նշանակության քարե շինություն, սեփականատեր՝ Սպարտակ Սողոմոնի Խաչատրյան /սեփ. իր. վկ. № 12092018-03-0040, տրվ. 12.09.2018թ-ին: Գույքն արտաքին և ներքին հարդարում չունի, ներքին ընդհանուր վիճակը՝ վատ: Լոտի մեկնարկային գինը՝ 2.204.000 (երկու միլիոն երկու հարյուր չորս հազար) ՀՀ դրամ:
(Ծանոթություն. հողամասի նկատմամբ սեփ. իրավունքը փոխանցված է ՀՀ 04.10.2005թ N199-Ն օրենքի 23-րդ հոդվածի պահանջի համաձայն, պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացնելու դեպքում):
Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է՝
• աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը, այն է՝ ո՛չ ուշ աճուրդի անցկացման օրվանից հինգ օր առաջ, կարող են հայտ ներկայացնել, իսկ աճուրդի մասնակից չհամարվող անձինք՝ ծանուցել ՀՀ սևանկության դատարան՝ ք.Երևան, Օտյան 53/2 հասցեով: Հայտին կից ներկայացվում է աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարման անդորրագրերը, ֆիզիկական անձինք՝ նաև անձնագրի պատճենը, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերը՝ նաև իրենց պետ. գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները:
Աճուրդի մասնակցության վճարը լոտի մեկն. գնի 1%-ի չափով (բայց ոչ ավել, քան 200.000,0 ՀՀ դրամ), իսկ նախավճարը՝ 5%-ի չափով, մինչև հայտի ներկայացման պահը պետք է վճարվեն Սպարտակ Խաչատրյանի սևանկության հատուկ հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ի Վեդու մ/ճ, հ/հ 2477605780850005):
Աճուրդի մասնակից չհամարվող անձինք, բացառությամբ ՀՀ արդարադատ. նախ. ներկայացուցիչների, աճուրդին ներկա գտնվելու համար վճարում են 10.000 դրամի չափով մուտքի վճար: Հայտի ներկայացմանն առնչվող հարցերը, աճուրդի անցկացման և արդյունքներով պայմանավորված հարաբերությունները

կանոնակարգվում են ՀՀ արդարադատ. նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով հաստատված կարգով, որը համարվում է աճուրդի կանոնակարգ:
Աճուրդի նախատեսված օրը կարող է փոխվել և հետաձգվել՝ այդ մասին աճուրդի կայանալուց ոչ պակաս երեք օր առաջ կատարելով համապատասխան հայտարարություն:
Աճուրդի մասնակցության վճարը նախատեսված է աճուրդների աշխատանքների կազմակերպման համար և չի մտնում պարտավորությունների մարման նպատակով բաշխման ենթակա գույքի արժեքի մեջ:
Եթե լոտերի թիվը մեկից ավելի է, ապա դրանց աճուրդները կազմակերպվում են լոտերի հերթականությամբ: Լոտի աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդի հաղթողը լոտի վաճառքի գինը պարտավոր է ամբողջությամբ վճարել աճուրդի օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում:
Եթե լոտը իրավաբանական անձի սեփականություն է, ապա լոտի վաճառքի գինը ներառում են նաև հարկերը, իսկ եթե ֆիզիկական անձի սեփականություն է, ապա լոտի վաճառքի գնի մեջ չեն ներառվում հարկային գործակալների կողմից վճարման ենթակա հարկերը:
Աճուրդին մասնակցելու, առուվաճառքի պայմանագրի կնքման և դրանից ծագող իրավունքների պետական գրանցման և/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետ պահանջելու և/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը, առուվաճառքի պայմանագրի կնքման համար անհրաժեշտ և դրանից բխող բոլոր ծախսերը կատարվում են աճուրդի հաղթողի կողմից:
Լոտը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության օրվան հաջորդող 7 (յոթ) օրերի ընթացքում, աշխատանքային օրերին և ժամերին՝ նախապես պայմանավորվելով կառավարչի հետ: Կառավարչի հետ պայմանավորվելու, լոտերի մասին տեղեկություններ ստանալու և աճուրդին առնչվող ցանկացած այլ հարցով կարող են փոստով (հասցեն՝ Արարատի մարզ, գ. Գոռավան, Պ. Սևակի 3, հեռ. 094 348664) կամ էլ. փոստով (henrik.martikyan@mail.ru) նամակ գրել սնանկության գործով կառավարչ Հենրիկ Մարտիկյանին:

37494348664

henrik.martikyan@mail.ru

-